

ՄԻ ՔԸՆԻ ՕՐ

ՍԻՒՆԻՔՈՒՄ ԵՒ ԱՐՑԱԽՈՒՄ

Բ. *)

Հայաստանի մակերեսոյթը ծածկուած է անթիւ
լեռնագօտիներով ու ձորերով։ Քար ու հողից կազմուած
այդ կնճիռների լաբիւրինժոսում գժուար է որոշ ուղղ
զութիւն և կանոնաւորութիւն գտնել, եթէ չզեկավա-
րուել գետերի ընթացքով։ Արցախն ու Սիւնիքն էլ
պատած են խիտ և խճճուած կնճիռներով, որոնցից ա-
մենահսկայականը ընկած է Կուր և Արաքս գետերի
միջև, սկիզբն առնելով Սևանայ լճի հարաւարեելեան
անկիւնից։ Արցախ-Սիւնիքեան այդ գալարուն և հսկայ
լեռնագօտու ձիւնապատ գագաթների ծերպերում և
խուլ ծմակներում սկիզբ են առնում մի կողմից Կուր
գետի մեզ ծանօթ բազուկները—Թարթառ, Խաշէն և
Պարգար—և միւս կողմից՝ Արաքսի ձախակողմեան բա-
զուկներից Հաքարին և Որոտնը։ Այդ լեռնագօտու հիւ-
սիսային լանջի վրայ է մեր տեսած Թթու-Զուրը։

Դարիվեր ճանապարհը իսկոյն հասցնում է մեզ
կայարանից լեռնագօտու կոհակաւոր ողնին (քրեբեր)։
Մի տնկած սիւն իր ցուցանակով մեզ իմացնում է որ
գուրս ենք գալիս Շուշու գաւառից և մտնում Զանգե-
զուրի սահմանները։

Ճանապարհից աջ և ձախ երեսում են լեռնագօտու.

*) Տես «Մուլճ», № 9.

ամենամերձաւոր գագաթները՝ Սարըբաբան և Սաղսազանը, որոնք պահպանների նման հսկում են Արցախից Սիւնիք տանող ուղին։ Զնայած որ յուլիս ամիսնէ, այդ գագաթների խորշերում դեռ սպիտակին են տալիս ձիւնի շերտեր։ Ճանապարհի այդ ամենաբարձր կէտից փուռում են մեր առաջ Սիւնեաց աշխարհի մերձաւոր ձորերն ու լեռները, ներկայացնելով կանանչ կոհակների մի ամբողջ ծով։ Անտառների կանանչ սաղարթը հեռուից սկին է տալիս, զարմանալի չէ որ այդ երկիրն խուժած թաթարական ցեղերը տուին նրան Հարազաղ (սև բաղ) անունը։

Սակայն ինչ հիմունքով այդ լեռնագօտին Արցախի և Սիւնիքի սահման համարել և ոչ նրանից քսան վերստ հարաւարեւմուտք գտնուող Հաքարի գետը Եթէ ի Նկատի առնենք որ հնում շինուած ճանապարհները չկային պէտք է չափաղանց գժուարանց լինէր այդ լեռնագօտին, մինչդեռ յայտնի է որ հայը հնում գիտէր հըսկայական և ամուր կամուրջներ շինել. մի գործ որ նրա աչքում եկեղեցի կառուցանելու չափ հոգու վարձք էր։ Այսօր էլ գուք ժողովրդի բերնից կը լսէք «հենց իմացիր եկեղեցի կամ կամուրջ ես շինում» խօսքերը, երբ նա մի բան թախանձանքով խնդրում է ձեզնից։ Բացի այդ, լեռնագօտին աւելի է կլիմայական տարրերութիւն մտցնում իր հակառակ լանջերում, քան գետը իր երկու ափերում։ Հետեւաբար, թող մեր հնագէտները այնքան էլ չվրդովուեն եթէ բռնազբանիկ տրոհում ենք մտցնում Արցախի և Սիւնիքի մէջ. չմոռանանք որ ժողովուրդն էլ այդ կէտում մեզ հետ համամիտ է. ասարի էն զոլքա արցախեցու բերնում նշանակում է Զանդեղուրը...»

* * *

Լեռնագօտու ողնից զառիվայր օձապտոյտ ճանապարը ձգւում է մի խոր ձորի հիւսիսային լանջով։ Զու

ըի յատակում հոսում է Հաքարի գետի վտակներից մէշ կը: Այն ամբողջ կանաչ տարածութիւնը, որ փոռած է այժմ մեր առաջ՝ Նարազլաղ հայկական մեծ գիւղի հողերն են. վարում են, ցանում, հնձում հայ ժրաջան աշխատողները և առիւծի բաժին տալիս իրանց վաստակից դատարկապորտ բէգերին. թաթար նուաճողների շառաւ վիղներից են դրանք և այժմ օրէնքով շարունակում են տիրել մի ժամանակ բռնի ուժով խլած վայրերին: Բէգական տիտղոսներով մահմէշգական բռնականների նուրարները այժմ «աղնուական» դասակարգ են կազմել և օգտուում են այն հանգամանքից, որ Անդրկովկասում դեռ չի իրագործուում դիւղացիական հօղաբաժինների յետագնման օրէնքը: Բայց արտօնեալ դրութիւնը չի արգելում որ ընտանեկան բաժանումը և բէգական ծուլութիւնը տընտեսապէս քայլայեն այդ «աղնուականներին» և դրանցից շատերին դարձնեն սովորական թուրք «փահլաներ»: Կարեկի երկաթէ օրէնքը ստիպում է տղէտ բէգերին ապրուստ հայթհայթելու համար բրիչ ու բահ բռնել այն ձեռներում, որ ըստերևսոյթին ստեղծուած էին որսորդական բազէներ պահելու...

Գուցէ մի այդպիսի բէգ էր այն «փահլան», որ մեր կառքը մօտենալիս հաւաքեց իր բահն ու բրիչը ճանապարհից, ուր նա բանում էր, և մի կողմքաշունչով դիմեց մեզ.

—Աղա, նեա թագա խաբար: —Նա նոր տեղեկութիւն էր հարցնում ուսու-ճապոնական պատերազմի մասին...

Մի քանի վերստ անց, մի դուքանի առջև մի խումբ էր երկում. հայ և թուրք դիւղացիներ էին, շրջապատուած սպառազէն ուսու զինուորներով: Այդ կալանաւորները զոյգ-զոյգ շղթայուած էին ձեռներից, որպէսզի չփախչեն: Բանից դուրս եկաւ որ անպասպորտների մի էտապ: Էր այդ ուղղակի Բագուից:

Մերձակայ դիւղական մի բանի խրճիթներից դուրս էին թափուել հայ կանաք իրանց բնորոշ հագուստ-չոկամբեր, 1904.

ներով և սարալանջից կարեկցութեամբ նայում է-
ին ճանապարհով քայլող այդ կալանաւորներին, որոնք
սաստիկ քաշում էին, կարծես ուզում էին մի կերպ
հասկացնել թէ իրանք յանցաւորներ, չարագործներ չեն-
—ի՞նչ են արել այդ խեղճերը, —հարցրեց մի պա-
ռաւ մեր կառապանից:

—Առանց պաշտորա քննեացալ ըն Բագու, պոլի-
ցան փոնալ ա ետ ըղարկալ, —եղաւ պատասխանը:

Առաջի անգամից անհասկանալի էր թւում գիւղացի-
ների այդշափ անփութութիւնը. չէ որ պասպորտը տըր-
ուում է ձրի, էլ ինչու չվերցնել տանուտէրից և այնպէս
գնալ քաղաք աշխատանքի: Բայց... բանը հէնց այդ
«բայցի» մէջ է. այն գիւղացին, որի վրայ տուրքի ա-
պառիկներ կան՝ չի ստանում անցաթուղթ: Եւ ահա
ստեղծուում է մի անել դրութիւն. անցաթուղթ ստու-
նալու համար նա պէտք է իր վրայ մնացած հարկերը
վճարի. իսկ վճարելու համար պէտք է պանդխափ. այդ էլ
առանց անցաթուղթի չի թոյլ տրւում: Եւ միակ եկը
մնում է՝ գնալ առանց անցաթուղթի, այն յուսով որ
աննկատելի կը մնայ այնտեղ և մի քիչ դրամ վաստա-
կելով յետ կը գայ և իր պարտքերը կը վճարէ:
Յոյսը մեծ մասամբ ի գերեւ է ելնում, և... «Էտապով»
յետ են ուղարկուում իր ծննդավայրը ոտքով, շղթա-
յակապ:

* * *

Ահա և Հաքարին իր վճիտ, փրփրագէղ ալիքներով:
Մենք անցնուում ենք նրա ամենածանծաղ հունով, բայց և
այնպէս ջուրը քիչ է մնում թափուի կառքի մէջ:
Գետի լայն հովտից ճանապարհը սկսում է դարիվեր
քարձրանալ, ուրամուր անցնելով թթենիի և կեռասենիի
պուրակների կողքով: Մենք պէտք է կտրենք մի ամ-
բողջ լեռնադաշտ, որ ընկած է Հաքարիի և նրա աջ
քաղզուկ՝ Զաբրդ գետի միջև: Անտառապասա լան-

Զերի փոխարէն մեզ շրջապատում են վարելահողեր, պատղառու ծառերի պաւրակներ:

Միքանի ժամ անց իջնում ենք և Զաբըզի հովիտը, անցնում երա փոռւած, բաժան-բաժան եղած ջրերով, առանց կամուրջի: Հները մեր երկրում գիտէին կամուրջներ շինել, իսկ ճանապարհները թողնել Աստծու կամքին. այժմ ընդհակառակն է կատարում. տեղ-տեղ ճանապարհներ շինում են այդ խուլ գաւառական անկիւններում, իսկ կամուրջների կառուցումը համարում է շոայլութիւն:

Զաբըզի հովտից գտարձեալ վերելք և մեր առաջ ընդարձակ լեռնագաշտ մինչև Որոտ գետի ձախակողման մեան բազուկ՝ Կորիսի գետը:

Այդ ընդարձակ լեռնագաշտի վրայ գտնեում են միքանի մեծ գիւղեր զուա հայ ազգաբնակութեամբ. դրանցից մէկը մեր ճանապարհի վրայ է և կոչւում է Տեղ, իսկ ուսումները թաւրքերից աղաւաղած Դրզ անունն են ընդունել: Այդտեղից մինչև Կորիս 20 վերստ է:

Մօտ 500 տնից բաղկացած այս գիւղի մէջ երեւում են երկյարկանի և պատշգամբաւոր տներ. ունի տարրական ուսումնաբան: Պատուհում են երոպական տարազով մարդկի և կանայք: Այսերում տեսնում էք կատարելագործուած երկաթէ գութաններ: Զկարծէք թէ Գիւղատնտեսական Ընկերութեան կամ կոկարդաւոր ագրոնոմների ջանքերով են մտել այդ գութանները գիւղացիական տնտեսութեան մէջ. ոչ, կեանքի նիւթական պահանջներում գիւղացին սովորել է ինըն իր գլխի ճաշրը տեսնել, սրովհետեւ շատ երկար նա պէտք է սպասի որ բիւրոկրատիական մեխանիզմը շարժուելով իրան էլ հասնի: Աւելի անմիսիթարական է գիւղացու վերաբեր մունքը գէպի ոչ նիւթական, այլ մորալպահանջները. նրա մտաւոր զարգացումը, օրինակ, այն վիճակի մէջ չէ, որ տըպագրական խօսքը նրա համար պահանջ լինի: Գիւղերում այժմ մեան գպրացական ուսուցիչներն էլ մեծ մասամբ տեղական ժողովրդից կտրուած պաշտօնեաներ են: Կողմնակից

լինելով «բնական մեթոդին», որով դասաւանդութիւնից իսպառ հեռացւում է մայրենի լեզուն, հազիւ թէ այդ գործիչները նպաստեն ընթերցասիրութեան։ Դպրոցներին կից չկան գրադարաններ, ընթերցարաններ, չեն կազմակերպում դասախոսութիւններ։ մի խօսքով սկզբ-ընական դպրոցը չի կատարում այն գերը, որ յատուկ է նրան, օրինակ, զեմստվոյական նահանդներում։

Աւելի ևս մեծ է Խնձորեսկ գիւղը, որ չի երևում ճա-նապարհից և ընկած է լեռնագաշտի հարաւային մասում։ Այդ գիւղը ունի աւելի քան 600 տուն, մոտ 4200 բնակիչ-ներով. ասում են՝ կան միքան տամնեալ հազար գրամա-գլուխ ունեցող գիւղացիներ։ Բագուից ներմուծուել են շուայլութեան իրերը և մոդային հետևելու պահանջներն անդամ, սակայն ամբողջ գիւղում չի ստացւում մի օրինակ «Մուրճ»։ Երևի աւելի բախտաւոր չեն օրաթերթերը։ Պարզ է որ մօրալ, մտաւոր պահանջները թմրած վի-ճակի մէջ են. դրանց զարթեցնելու համար հար-կաւոր են հասարակական ոյժերի աւելի ազատ գործա-դրութիւն յօգուտ ժողովրդի մտաւորականութեան և կրթական հաստատութիւնների աւելի սերտ կապակցու-թիւն տեղական պայմանների հետ։ մի խօսքով այն, ինչ այնքան գեղեցիկ կերպով ձևակերպեց ներքին գոր-ծոց նոր մինիստրը, շեշտելով կառավարութեան վստա-հութեան մասին դէպի ինքնավարական մարմինները և բարեացակամ վերաբերմունքը դէպի ազգաբնակութեան կարիքները։

* * *

Այնքան քիչ անցուդարձ անողներ են պատահում ճա-նապարհին որ մարդ առանձին հետաքրքրութեամբ է աչք դարձնում հեռացող փոշու ամենմի ամպի վրայ։ Մեր մօտով սրբնթաց անցաւ պոստային սայլակառք ակ-ցիզառու պաշտօնեաներով. այդ ոուս մարդիկ իրանց պարտականութիւնների շնորհիւ ստիպուած են մուտք

գործել ամենախուլ անկիւններն անդամ և շփուել խաւար գիւղացիների հետ, որոնց մէջ դեռ ևս կենդանի են պարսկական բեժիմի աւանդութիւնները, յաճախ իրաւունքների անդիտակ գիւղացիները համակերպում են գրանց բացարձակապէս ապօրէն պահանջներին: Խնձ մի վստահելի ականատես, օրինակ, պատմում էր հետևեալ գէպքը, որ պատահել էր հէնց միքանի օր առաջ մի հայ գիւղում: —Գիւղի հրապարակում ձիուց իջնում է մի սպառազինուած ակցիզառու և գոռոզաբար հրամայում մօտը կանգնած գիւղացուն.

—Է՞յ, բռնիր ձիուս սանձը: —Գիւղացին բռնում է, սակայն պատկառանքով և խոնարհութեամբ յայտնում է.

—Աղա, ես գործ ունեմ, պէտք է գնամ:

Ակցիզառուն իսկոյն բռնկուում է այդ «ընդդիմաղրութիւնից» և սկսում մտրակել գիւղացուն, ամենմի հարուածի հետ հայհոյանքների տարափ թափելով խեղճի դլիսին և որքան մեծ համբերութեամբ է տանում նա այդ բոլորը: —այնքան կստաղի է դառնում յարձակումը Հարուածողը, իր ձեռները աւելի աղատ չարժելու նը պատակով, գետին է գցում իր շապկի օսլայած թեքերը: Հանդիսատես գիւղացիներից մէկը իսկոյն վաղում է և ակնածութեամբ վերցնելով այդ թեքերը՝ ձեռքին բըռնած սպասում է, մինչև որ հանդարտուի «աղա ակցիզնին», ապա ստրկական խոնարհութեամբ մատուցանում է օսլայած թեքերը ըստ պատկանելոյն...

Պատմողը զարմացաւ, երբ ես ասացի թէ տուժողը իրաւունք ունէր գանդատուելու ակցիզառուի ապօրէն գործողութիւնների համար: Այդ խուլ անկիւններում օրէնքի վարկը իհարկէ գցում են նկարագրած տիպի պարոնները:

Փոշին ճանապարհի վրայ աւելի մեծ չափեր էր ստանում. մեր առջևից գնում էր «քոչը»: Թուրքեր էին. ասենք, տեղացի քիւրդերն էլ քիչ են տարբերում թուրքերից. շիա կրօնը և պարսկական բեժիմի գարեւոր աղդեցութիւնը ի մի են ձուկել տարբեր ցեղական ծագում

ունեցող այդ մահմէդականներին. բիւրդերը մոռացել են իրանց լեզուն, տարազը և դառել են շրջապատող թուզ-քերի նման՝ շիա մուսուլմաններ։ Կանաքը, տղամարդիկ, ծեր, երեխայ, բեռնաբարձ ձիեր, եղներ ու գոմէշներ, խումբներմբ արջառ, ոչխար, չներ—այդ բոլորը մի խառնիճաղանց բազմութիւն էր կազմում։ Աւելի կեղտի, չարբաշութեան, ծայրայեղ անկուլտուրականութեան տպաւրութիւն էր թողնում այդ բոչը, բան բանաստեղծական հրապարակներ պարունակում։

Վերջապէս գուրս եկանք այդ ժխորից, որ լրցնում էր օդը փոշով, մարդկանց հարայհրոցով ու ճիշով, շըների հաջոցով և տաւարի բառաչով։ Ճանապարհը դառնելիք պառիվայր պտոյտներով իջնում էր կորիսի գետի հովիտը։

Հեռուից երեաց գետի միւս ափում, հարթ դաշտավայրի վրայ փոքրիկ նոր կորիսը, որ միայն այս տարի դաշտավայրն քաղաք լինելու պատիւն ունեցաւ։ Գետի ձախ ափին հին կորիս գիւղն է նրա յետելից սարը բարձրացել է ինչպէս մի պարիսպ մի շարք կոնաձեւ աշտարակներով։ Շաբարի գլխի նման կանգնած այդ բուրգերը բնութեան մի խաղ է, առաջացած շատ պարզ պատճառներից։ անձրեկի կաթիլները, թափուելով փխրուն հողի շերտերի վրայ, պոկել են ու տարել աւելի թոյլ կպած մասնիկները, և մնացել են ժայռի կտորների տակ պաշտպանուած շերտերը։ Այժմ էլ կարելի է նկատել հաղային կոնաձեւ սիւներից միքանիսի գլխին գլխարկի նման դրած քարի մեծ կտորները։ Ժամանակի ընթացքում այդ քարէ գլխարկներն էլ կ'ընկնեն, ինչպէս արդէն լնկել են շատ սիւների գաղաթներից, և աւելի արագ առաջ կը գայ անձրեկի կաթիլների աւերիչ դերը. կը մաշուեն, կը քերուեն, կը փոքրանան այդ կոնումները։

Այդ հողային բուրգերի մէջ ծակուած են խորշեր, որոնք այժմ էլ ծառայում են իրեւ բնակարան, խոտանոց։ Անշուշտ այդ այրերից շատերը բնական են, սակայն կան և մարդկանց ձեռքով փորուածներ։ Միքանիսի մուտքը

այնքան բարձր է գետնից, որ պէտք է սանդուկներով
բարձրանալ:

Արհաւիրքներով լի մահմէդական բռնութեան տա-
րիներում այդ ծակերը կամ «քարատակ»-երը հայերի
համար եղել են թաղնուելու տեղեր, պարանի սան-
դուկներով էին նրանք բարձրանում ապաստանելու այդ-
տեղերը և իրանց յետեկց վերքաշում սանդուզը և այդ-
պիսով կտրում գետնի հետ հաղորդակցութիւնը:

Քիչ սև օրեր չեն տեսել Սիւնիքի հայերը հիւսիսից
խուժած լազերից, արևմտքից ասպատակող օամանցինե-
րից և հարաւից հրով ու սրով յարձակուող պարսիկնե-
րից: Բնիկ ըիւրդ և թաթար ցեղերն էլ գայլերի նման
գիշատում էին այդ թշուառ հօտը: «Ծակերը» քիչ օգ-
նեցին հային. նա մտածեց Դաւիթ-բէդի մամանակ սրի
ուժով բարուոքել իր անտանելի կացութիւնը,՝ սակայն
այդ փայլուն փորձըն էլ խեղզուեց մահմէդական ծո-
վում, ինչպէս անօդնական լուղորդի ջանքերը վիթխարի
ովկիանոսի անվերջ ալիքների մէջ:

I. Ա.

(Կը շարումակուի)